

Մ Ի Յ Մ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻԻ 2.

ՓԵՏՐՎԱՐ 29.
1872.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆՍՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՍԻՆ

ԿԱՆՈՒԱԾԱԿԱՆ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԽՆԴՐՈՅ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի

ՍՈՒՐԲ ԱԹՈՒՍ, ԼԷԳԻՍՏՐԱՏԻ ԿԱԼ
ուածական և թեմական խնդրոց ծագ-
ման առաջին օրէն ՚ի վեր, փափաքե-
ցաւ ամեն զգուշութիւն և հնարա-
ւոր միջոց ՚ի գործ դնել, որպէս զի
յիշեալ խնդիրներն լուծուին առանց
գժտութեան և տարաձայնութեան .
սակայն չը յաջողեցաւ վայելել իւր
զգուշութեան և խաղաղատիրութեան
արդիւնքը : Ազան մարդիկ, սրբ ոչ
միայն չը կամեցան տեսնել միաբա-
նական Աւստիս խաղաղատէր վար-
մունքն, այլ և Նախագահէն սկսեալ

մինչև յետին միաբանը, զրպարու-
ցին իբրև անիրաւ, ամբաստանե-
ցին իբրև խռովարար, նախատեցին
իբրև փառախնդիր, և ամեն անարգա-
նօք անարդեցին, որպէս զի իրաւանց
ձայնը յռեցին, արդարու թեան ազա-
ղակը խեղդեն և ճշմարտութեան դա-
տը մահացնեն : Նախատիրներն մաս-
նաւորապէս Միաբանութեանս վրայ կը
տեղային, բայց ի հարկէ Միաբանու-
թեան խնդրած ու պահանջած իրա-
ւունքն և նոյն իրաւանց արդիւնքն ու
պարծանքն ընդհանուր Ազգինն էր և

անշուշտ Ազգային Արչունթեան մը
տադրութիւնն եւս գրաւած էր :

Արդ Ազգային Արչունթեանը պաշ-
տօնապէս կը հաղորդէ այսօր իւր վեր-
ջին անօրէնութիւնը Ազգիպտոսի կա-
լուածական և թեմական խնդրոց մա-
սին , և Ս . Աթոռս , թէ եւ՛ մէջ ա-
ռանց զսօզութեան , սիրով կը զիջա-
նի ընդունիլ զայն և փութալ գործա-
դրել ինչ որ իրեն կը վերաբերի : Ան-
դունի Ս . Աթոռս Ազգային Ար-
չունթեան անօրէնութիւնն , առանց
անցեալ գժտութեանց փոշիները մա-
ղերու և իւր կողմէն նոր խափու-
թեան առիթ տալու . սակայն եթէ
այսքան զիջողութենէն զինի՛ Ազգային
Արչունթեան օրոշումներն չըյար-
գունայնացող կողմէն , և Արչալոյս վերըս-
տին շտեմարան դառնայ անհիմն փա-
տաբանութեանց և վատահամբաւիչ
զուպարտութեանց , անշուշտ Ս . Ա-
թոռս եւս կը պարտաւորի , որպէս
աւանդապահ ազգային նուիրական ի-
րաւանց , իւր արդարացի բողոքներն
շարունակել , զորս այժմ կ'ընդհատէ
Ազգային Արչունթեան անօրէնու-
թիւնը յարգելու և հրապարակաւ
յայտնելու , որ ինքն միշտ փափաքած
է և կը փափաքի խաղաղութեան :

Ահաւասիկ իբրեւ վկայութիւն
այն հրապարակական յայտարարու-
թեան կը հրատարակենք թէ Ազգային
Արչունթեան Պաշտօնական Վիբն , թէ
Վերապատիւ Սեպտուկ Եպիսկոպոսին
տրուած Հրահանգն և թէ Ս . Աթո-
ռոյս Մատապահի կողմէն առ կգիպ-
տաբնակ սիրելի վիճակայինսն ուղ-
ղուած կոնքախն :

ԴԻԻԱՆ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Թիւ, 1412 .

Ամենադատիւ Տ . Տ . Եսոյի Սրբազան Արք
եպիսկոպոս . Բարեխնամ Պատրիարք Ս . Աթո-
ռոյն Երուսաղեմայ :

Ամենապատիւ Սրբազան Եղբայ . Ի Բրիտան :

Հարկ չէ ըսել թէ Ազգ . Ար-
չունթիւնը Ս . Աթոռոյդ և Ազգիպտո-
սի մէջ ժամանակէ մը Ի վեր ծագած
անհամաձայնութիւնները չէր կրնար
անտարբեր աչօք նկատել , երբ մէկ
կողմէ Չեր Սրբազնութիւնը Ս . Ա-
թոռոյդ կալուածական և թեմական
իրաւունքներն յիշեալ վիճակին մէջ
վտանգի ներքեւ տեսնելով կը բողո-
քէր և իւր իրաւանց պաշտպանու-
թիւնը կը պահանջէր , երբ միւս կող-
մէ ալ Ազգիպտոսեան ժողովուրդն իւր
Ազգ . Սահմանադրական իրաւունքն
յառաջ բերելով Վեր . Սեպտուկ Ե-
պիսկոպոսի առաջնորդական ընտրու-
թեան վաւերացումը կը պահանջէր ,
արդարեւ Ազգ . Արչունթեան ուրիշ
րան չէր մնար , բայց եթէ ամեն ջանք
Ի գործ դնել երկու կողման իրաւ-
ունքներն ալ գոհ ընելու եղանակաւ
յիշեալ խնդիրներն լուծելու , որով
կարելի ըլլար համաձայնութիւնը վե-
րահաստատել Ս . Աթոռոյդ և Ա-
զգիպտոսի մէջ : Այս նպատակաւ Ազգ .
Արչունթիւնը յիշեալ Եպիսկոպոսին
և Արք . Աստուածատուր վարդապե-
տին մէջ անցեալ տարուան պատահած
ճանք վէճը քննելու համար Չեր
Սրբազնութեան ըրած բողոքներուն
վրայ փութաց յիշեալ Եպիսկոպոսը
մայրաքաղաքս կանչելու , և այս անձ-
նական վէճին քննութեան հետ մի-

անդամայն լուծել Արուսազէ մայ և Ազխատոսի մէջ առկախ մնացած իրն գիրնէրը : Աւտի յիշեալ եպիսկոպոսը մայրաքաղաքս գալէ 'ի վեր Ազգ. վարչութիւնն ամեն ջանք 'ի գործ դըրաւ յիշեալ խնդրոց վախճան մը տալու : Աւտոյ եպիսկոպոսի և Մատուածատուր վարդապետի անձնական վէճքն թէեւ բաւական ժամանակ քննութեամբ դեաղեցոց զԱզգ. Վարչութիւնը, բայց հուսկ ուրեմն հաշտարար եղանակաւ զայն վերջացնել յաջողեցանք, և հարկ չեմք համարեր այժմ անոր պարագաներուն վրայ մանրամասնութեանց մէջ մտնել, որով հետեւ երկուքն ալ կատարեալ սիրով հաշտուեցան միմեանց հետ, որով անցեալն մոռացութեան տակ թաղուելով կը յուսամք որ ազագային մէջ այսպիսի վէճերու տխուր փորձերը չեն նորագուիր 'իցաւ սրտի Չեր և Սեր առ հասարակ :

Իսկ կալուածական և թեմական խնդիրներուն գալով, Ազգ. Վարչութիւնը առաջնայն համար չը վարանեցաւ կանխաւ երկու կողմնէ կարգուած իրաւարար Կանձնաժողովոյն որոշումը վերահաստատել, որով արդէն Արուսազէ մայ Աթոռոյն պատկանեալ Ազխատոսի մէջ գտնուած կալուածներն զատուած և աննց եկամտից հաւաքումը ու տեսչութիւնը Ս. Աթոռոյդ յանձնուիլը կարգադրուած էր, նոյնպէս և Աղէքսանդրիոյ մէջ գտնուած արսային բաժանումն եղած, բայց Աղէքսանդրիոյ եկեղեցւոյն պատկանեալ մասին՝ որու վրայ դառնալու կէտք միայն անորոշ մնալով՝ երկու կողման անհամաձայնութեան նիւթ դարձած էր : Այս վերջին կէտին լուծումն այս անգամ Ազգ. Վարչութիւնը իրեն վերստահել սրտէց, սրպէս զի երկու

կողման գժտութեան առիթ մը չը մնայ, որով Ազգ. Վարչութիւնն այս մասին Չեր սրբազնութեան հետ բանակցելէ ետեւ իւր տակը վերջին որոշման գործադրութեան համար պէտք եղած մասնաւոր Հրահանգը Ազխատոսի Ազգ. Վարչութեան հաղորդելու հոգ պիտի տանի : Հետեւ ապէս Չեր Սրբազնութիւնը պէտք չունենալով այսուհետեւ ուղղակի միջամտել և բանակցիլ այս մասին Ազխատոսի Ազգ. Վարչութեան հետ, կրնայ ապահով լինել թէ Ազգ. Վարչութիւնը իւր միջամտութեամբ պիտի փութայ օրինաւորապէս լուծել և վախճան տալ այս խնդրոյն :

Այլուածական խնդրոյն անօրէնութեան հետ Ազխատոսի առաջնորդութեան խնդիրն ալ որ նախորդ Վարչութեան օրէն կախ մնացած էր, լուծելու համար Ազգ. Վարչութիւնը նկատելով որ մէկ կողէն սահմանադրապէս ժողովրդեան ընտրութիւնը և միւս կողմէն Արուսազէ մայ Աթոռոյն թեմական իշխանները յարգել կը պարտաւորի, չը վարանեցաւ իւր այս կրկնակի պարտաւորութիւնը կատարել : Սերոյ եպիսկոպոսի ընտրութիւնը վաւերացնելով, եւ պէտք եղած հրովարտակը Ս. Վանէն ստանալով. իսկ առաջնորդական կոնգակը Չեր Սրբազնութեան վերապահելով :

Հարկ չէ ըսել թէ Ազգ. Վարչութիւնը սոյնառաջնորդական խնդրոյ մէջ սահպողական պատճառներէ շարժեալ խոհեմութիւն համարեց միայն այս անգամի համար բացառութիւն մը ընել Ազխատոսի ժողովրդեան անզուսպ բաղձանաց համեմատ Սեր. Սերոյ եպիսկոպոսի առաջնորդական պաշտօնն հաստատելով, առանց կանխաւ Չեր Սրբազնու-

Թեան համահաճու թիւնն ստանալու ,
ինչպէս օրէն էր , վստահ ըլլալով որ
այս պարագային մէջ Չեր Սրբազնու-
թիւնն ալ ներողամիտ կը գտնուի և
կը փութայ Սերուիկ Սրբազանի ա-
ռաջնորդական կոնդակն ու զարկել , ո-
րով Ս. Աթոռոյդ Թեմական իրաւա-
սու թիւնն անվթար պիտի պահպան-
ուի , ինչպէս Ազգ . Վարչութիւնն
այս կէտը ապահոված է այն պաշտօ-
նական Հրահանգին մէջ , որ յատկա-
պէս յիշեալ Ապիսկոպոսին յանձնը-
ւեցաւ իւր պաշտօնին պարտուպատ-
շած գործադրութեան համար , եւ
որոյ օրինակը ներփակեալ կը հաղոր-
դեմք 'ի տեղիկու թիւն Սրբազնու-
թեանդ :

Ի վերջոյ նաեւ հարկ կը համարիմք
ծանուցանել թէ հանգուցեալ Փարիս
տիկնոջ կտակի խնդրոյն պատճառա-
ծագած անհամաձայնութիւնն ալ Ազգ .
Վարչութեան ու շարքութեան էն չը վը-
րիպելով 'Իւր Սերուիկ Ապիսկոպոսին
առանձին ազգարարութիւն եղած է որ
հանգուցելոյն ժառանգորդաց դատն
ըստ օրինի տեղական իշխանութեան
կողմէ , որուն յանձնուած է արգէն
նայն խնդիրը , որչու ելէ ետեւ . քըն-
նութեան արդիւնքն անմիջապէս Ազգ .
Վարչութեան հաղորդելով , պէտք ե-
ղած հրահանգն ստանայ և ըստ այնմ
զարմանն 'ի գործ դնէ :


Ահա այսօրիկ են Ազգ . Վարչու-
թեան ձեռք առած միջոցներն և ը-
րած վերջին որչումներն 'ի մասին Ս.
Արուսաղէմաց և Ապիսկոպոսի մէջ ծա-
գած իրաւանց խնդրոյն , որոց գոր-
ծադրութեան մէջ պիտի յաջողի Տե-
րամք այն համաձայնութեան վերա-
հաստատութիւնը , որ փափաքելի է
տեսնել երկու կողման մէջ : Կը յու-
սամք , ինչպէս Չեր Սրբազնութեան
հեռատես խոհեմութիւնը կերաչ-

խաւորէ մեզ , որ պիտի ջանայք Չեր
կողմէ պէտք եղած օժանդակութիւ-
նը 'նու իրել Ազգ . Վարչութեան ու
ընդմանց այն կէտերուն գործադրու-
թեան համար , որ Չեր Սրբազնու-
թեան կը վերաբերի , ապահով ըլլա-
լով որ Ազգ . Վարչութեան ջանքը
պիտի շարունակուին միշտ 'ի պաշտ-
պանութիւն շահուց և իրաւանց Ս.
Աթոռոյդ , որ միանգամայն ընդհա-
նուր Ազգիկն են :

Մնամք ազօթարար միշտ .
Պ . Կ . Սիբիլ Արքեպիսկոպոս :

19 Յունիս 1872 .

Ի Պարիսարարանի Հայոց
Կ . Պօլէս :



Գերագոտի .
Տ . Մեռօք Ս . Արքեպիսկոպոս
Բաբելոնամ Առաջնորդ Եպիսկոպոսի

Համար 1409 .

ՀՐԱՀԱՆԳ .

Ապիսկոպոսի և Աղէքսանդրիայ ժու-
ղովրդեան Սահմանադրապէս ըրած
ընտրութեան տեղեկագրերը Ազգա-
յին Վարչութիւնն ընդունելով ըստ
այնմ փութաց Չեր Սերուիկու
թեան առաջնորդական պաշտօնը վա-
ւերացնել և անոր հաստատութեան
հրովարտակն այս անգամ 'Ի . Իռնէն
ստանալով Չեր գերագատուութեան
յանձնելէ ետեւ ' որչեց առ այժմ
Չեր պաշտօնին պարտուպատշած գոր-
ծադրութեան համար ներկայ Հրա-
հանգը յանձնել Չեզ . Իսկ առաջնոր-
դական կոնդակը թէ' ըստ Ս . Հարց
աւանդութեան և թէ' ըստ Սահմա-
նադրութեան ուրկէց սրուել որ հարկ
է , 'ի վերջոյ անկէ պիտի ստանայ :

Ա. Երկար ատենէ ՚ի վեր Չեր վիճակին ժողովրդեան և Երուսաղէմայ Լժուոյն մէջ ծագած ցաւալի անհաւմաձայնութեան գլխաւոր շարժառիւթը կալուածական իրաւանց խնդրոյն վրայօք կանխաւ երկու կողմանէ կարգուած իրաւարար Յանձնաժողովոյն որոշման բոս մասին անգործադրելի մնալն եղած ըլլալով, Եղգային Վարչութիւնը որոշեց այս խնդրոյն վերջնական լուծումն իրեն վերապահել, այն պայմանաւ որ երկու կողմը ըզգուշանան առժամն որ և է միջամբտութիւն մ' ընելէ, որպէս զի նոր գժատութեան առիթ մը չծագի: Հետեւապէս թէ՛ Չեր Գերապատուութեան և թէ՛ վիճակիդ Եղգ. Վարչութեան պարտաւորութիւնը պիտի ըլլայ Գահիրէի մէջ գտնուած Երուսաղէմայ Լժուոյն վերաբերեալ կալուածոց և անոնց ելեմտոյց հաւաքման մասին ուղղակի որ և իցէ միջամտութիւն մը չընել, միայն թէ երբ որ և իցէ պարագայի մը մէջ Չեր Գերապատութեան կը գիմեն, այն ատեն պարտաւոր էք պարտուպատշաճ խընամբն ու պաշտպանութիւնը մատուցանել Լժուոյն փոխանորդին: Իսկ Եղգքսանդրիոյ արօտային խնդրոյն համար յառաջագոյն եղած որոշման համաձայն Եղգքսանդրիոյ եկեղեցւոյն պատկանեալ մասին սրու վրայ դանալն որոշելու խնդիրը Վարչութիւնը իրեն վերապահելով՝ Երուսաղէմայ Արքազան Պատրիարքին հետ յատկապէս բանակցելէ ետեւ, պէտք եղած մասնաւոր հրահանգը Չեր Գերապատութեան պիտի հաղորդէ:

Բ. Աւրիշ առաջնորդական վիճակաց նման Չեր վիճակին մէջ ալ Սահմանադրութիւնը գործադրել հարկ ըլլալով պարտաւոր էք թէ՛ Գահիրէի և թէ՛ Եղգքսանդրիոյ թաղխորհուրդներ

ըննել թէ օրինաւոր բուէարկութեամբ չեն ընտրուած և թէ պայմանաժամին լրացած է, օրինաւորապէս վերակազմել: Այնպէս վիճակիդ Երեւոյն անհան յողովը կազմելով անոր միջոցաւ Բաղաքական Եղով մ' ընտրել տալ եւ տեղեկագիրը Արքունական Վարչութեան հաղորդել:

Գ. Առաջնորդական վիճակաց կողմէ ՚ի նպատակ Երբ. սնտուկին սահմանուած տարեկան մուքաթայի տրոց բաժինը իւրաքանչիւրին կարողութեան և արժանաւորութեան համեմատ ուրոշելու իրաւունքն Եղգ. Արքունական Վարչութեան պատկանելով, անցեալ 1869 ին Խտուն Եղովը Չեր վիճակին տարեկան մուքաթայի տուբքը 5000 զուրուշի վերածելու որոշում ըրած էր:

Եղգ. Վարչութեան Բաղաքական Եղովը թէ և այն յաւելեալ գումարը վիճակիդ կարողութեան հետ բաղդատելով թեթեւ կը գտնէ, բայց առայժմ նախորդ Վարչութեան վերոյիշեալ որոշումը վերահաստատել միայն պատշաճ համարելով Չեր Գերապատութեան կը յանձնէ որ նոյն յաւելեալ տուբքն իւր նախորոշման թուականէն արձանագրել տալով, մինչեւ ցարդ անվճար մնացածը վճարելու և այսուհետեւ ալ նոյնպէս շարունակելու ջանադիր գտնուելք մինչեւ ցնոր տնօրէնութիւն:

Երգ՝ Եղգ. Վարչութիւնը անտարակոյս է որ Չեր Գերապատութիւնը սոյն Հրահանգն ՚ի ձեռնին ունենալով՝ իւր առաջնորդական պաշտօնը խաղաղութեամբ ՚ի գործ դնելու եւ Երուսաղէմայ Լժուոյն ու Երեւոյն փոխանորդեան մէջ նոր դրժուարութիւններ չըծագելու մասին ջանադիր պիտի գտնուի և Եղգ. Վարչութեան հետ իւր դրաւոր յարաբե

բուժիչները յարատեւ պիտի շարունակէ :

Ս'նամբ աղօթարար

(Ստրագրոսի Ս. Պարիարի)

19 Յունիս 1872

Ի Պարիարարանի Հայոց

Կ. Պօլէ :

ՅԻՍՈՒՍԻ ԲԻՅՍՈՍԻ ծառայ տէր Ասայի արքեպիսկոպոս եւ շնորհիւ ամենասուրբ Հոգւոյն Պատրիարք առաքելական սուրբ Աթոռոյս Արուսաղէմի եւ վերատեսուչ սուրբ եւ տրնորինական տեղեացն Քրիստոսի, յորմէ հասցէ շնորհք եւ օրհնութիւն ՚ի վերայ տիրանուէր վիճակին Ազիպտոսի սրբակրօն վարդապետաց, շքնորհազարդ քահանայից եւ համօրէն ՚ի Քրիստոս հաւատացեալ բարեպաշտ ժողովրդոց, մեծաց եւ փոքունց, սիրելի սրբւոց մերոց ՚ի Տէր, Սաղթեմ առ բարձրեղն Ատուած վասն Չեր ամենեցուն կալ մնալ միշտ ՚ի շնորհս նորա, ՚ի ճշմարիտ կրօնս աստուածապաշտութեան, ՚ի քրիստոնէական ուղղափառ հաւատս Հայաստանեայցս առաքելական սրբոց Ազեղեցւոց, ՚ի սէր եւ ՚ի միութիւն Աւետարանին խաղաղութեան, ՚ի ջերմեռանդն աստուածսիրութեան եւ յեղբայրսիրութեան, եւ ակն ունիլ երանելի յուսոյն եւ յայտնութեան փառացն հանդերձեցոց, զոր պատրաստեալ է Տէր, որոց սիրենն զնա, երկնչին ՚ի նմանէ եւ պահեն զպատուիրանս նորա :

Աւ ընդ տիրանուէր սուրբ ողջունիս եւ աստուածային օրհնութեանս՝ այսու պատրիարքական կնդակաւս յայտ առնեմք համօրէն սիրելի սրբ-

ւոցդ մերոց՝ բնակչաց ՚ի տիրոխնամ թեմիդ Ազիպտոսի :

Ըստ խնդրանաց բարեպաշտ վիճակայնոցդ եւ ըստ վերջին անօրէնութեան եւ որոշման Ազգային բարեխընամ Ակերոնական Վարչութեանն Կ. Պօլսոյ վաւերացուցանեմք ահա այսու մերով օրհնութեան կնդակաւ զառաջնորդութիւն Վերապատիւ սիրելի եղբոր մերոց Տ. Ստրագայ արքեպիսկոպոսի եւ պատուէր տամք հոգեւոր եւ շնորհասուն զաւակացդ սրբոց Ազեղեցւոց ընդունիլ զնա սրդիական սիրով եւ աստուածահաճոյ ակնածութեամբ : Աղաչեմք զձեզ, ըստ Առաքելոյն, ճանաչել զնա որպէս վաստակաւոր, վերակացու եւ խրատիչ ձեր ՚ի Տէր եւ արժանի համարել զնա առաւել սիրոյ վասն գործոյ իւրոյ. քանզի գիտեմք աներկբայ, զի եւ նա ըտզում աշխատութիւնս ունի կրել վասն ձեր : Աւտարն ք, սիրելի սրդեակք, կող հանապաղ ՚ի խաղաղութեան Աւետարանի, ընտրել ձեզ ըզհին բարի յամենայն ՚ի բանս եւ ՚ի գործս ձեր, աջակից լինել Վերապատիւ Առաջնորդին ձերոց ՚ի հանրաշահ ձեռնարկութիւնս, յաստուածահաճոյ գործառնութիւնս եւ յարդիւնաբեր ջանս եւ ՚ի վաստակս : Վասն զի աղբիւր ամենայն բարեաց եւ յառաջադիմութեան օժանդակութիւնն ճանաչի եւ սերն փոխադարձ : Իսկ ընդհակառակն, ուր չիք աջակցութիւն հովուին եւ հօտին, ուր տիրէ ատելութիւն երկպառակութեան, ուր արձակ համարձակ գլուխ ամբառնայ ետութիւնն ազգակործան, ուր յաճախեն անիրաւութիւնք, զրկողութիւնք, շահասնդրութիւնք, սուտ բարեպաշտութիւն եւ կեղծ մարդասիրութիւն, ուր մուտ գործեն այսպիսի չարիք, անդէն խաւարն անդի-

տութեան արիւնքն ՚ի միտս և ՚ի սիրտս ,
 խորհուրդք սպասկանին՝ , զգացմունք
 վատթարին , զորութիւն բարոյական
 սպառի և կեանքն հասարակաց մա-
 հանայ կենդանւոյն : Գուք , ծոցածին
 զաւակունքդ շտյատտանեայց Աւա-
 քելական սուրբ Ալկեղեցւոյ , դուք
 արարածք էք ամենաբարի Արարչին և
 հօտ՝ գնեալ արեամբ Գառին Աստու-
 ծոյ : Գուք որդիք էք լուսոյ և որդիք
 տունջևան , զգուշացարուք չանկանիլ
 զքնով , այլ լինիլ արթունս և զուար-
 թունս ՚ի ճանապարհի ճշմարտ ա-
 տուածպաշտութեան և ՚ի շաւիղս ա-
 նաղօտ լուսաւորութեան : Գիտա-
 ջիք , զի բարօրութիւն ազգաց և եր-
 ջանկութիւն ժողովրդոց ՚ի բրիտա-
 նէական իմաստութեան և ՚ի կենցա-
 ղագուտ քաղաքակրթութեան և եթ
 կայանայ : Արդ լցուցէք ուրեմն զԿի-
 տութիւն կամաց Տեառն ամենայն ի
 մաստութեամբ և հոգեւոր հանձա-
 րով , յամենայն գործս բարութեան
 պողաբերք և գիտութեամբն Աստու-
 ծոյ անճեցունք : Այլ ստէք միմեանց ,
 այլ զճշմարտութիւն խօսեցարուք իւ-
 րաքանչիւր ընդ ընկերի իւրում , զի
 էք միմեանց անդամք : Կացէք կատա-
 րեալք և լցեալք յամենայն կամս Աս-
 տուծոյ և զգուշ լերուք , զի մի որ ըզ-
 ձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ
 և անտի խաբէութեամբ , Գուն գոր-
 ծեցէք մանաւանդ անուցանել զման-
 կունս ձեր ՚ի բարիոք դաստիարա-
 կութեան և ՚ի կրթութեան , զի ի
 մաստութեամբ զարգացեալք և Կի-
 տութեամբ ճոխացեալք , լիցին պար-
 ծանք Ալկեղեցւոյ , պարծանք Ազգի և
 պարծանք հանուր մարդկութեան :

Քաջայոյս եմք և վստահ , զի յայ-
 սրմ ամենայնի առաջնորդ և գործա-
 կից լիցի սիրելեացդ՝ գերազատիւ-
 եղբայրն մեր ՚ի Տէր՝ Արարպ սրբաւ

զան արքայակոպոս , որու մ'վիճակե-
 ցաւ հովուական տեսչութիւն տի-
 րականամ վիճակիդ : Քաջայոյս եմք ,
 զի յարգեսցէ նա զօրէնս Աստուծոյ
 զաւանդութիւնս Ալկեղեցւոյ , զԱհ-
 մանագրութիւն Ազգին և զիրաւունս
 Ա. Աթոռոյս և յամենայն ձեռնար-
 կութիւնս իւր պատկառ կացցէ կա-
 մայն Աստուծոյ , առաքելական տես-
 չութեան Ա. Աթոռոյս և անօրէնու-
 թեանց Ազգային Արչութեան : Ար-
 խիթարեսցէ և հաստատեսցէ զակա-
 րացեալն ՚ի հաւատս , պաշտպանե-
 ցէ զիրաւունս զրկելոց և տառապե-
 րոց , օգնական լիցի որբոց և այրեաց ,
 խրատեսցէ զտահական , պատսպա-
 րան լիցի տկարաց , քաջալերեսցէ ըզ-
 բարեբարոյն և զառաքինագործն ,
 սաստեսցէ խոսվասիրացն և խրախու-
 սեսցէ զխաղաղասէրն , բարձցէ զսր-
 մատս ամենայն երկպառակութեան
 և ատելութեան , վարեսցի համաձայն
 որոշմանց Ահմանագրական վարչու-
 թեանց և արացէ զխաղաղութիւն ,
 զարդարութիւն և զսէր , որ է զլուխ
 պատուիրանին Քրիստոսի և զօգ կա-
 տարման :

Այս են տեսչական սարտիք Գե-
 րասարտիւ եղբոր մերոյ , զորս վստահ
 եմք թէ կատարեսցէ փութաջան սի-
 րով , և կենդանի օրինակաւ անձինն
 հաճեսցէ և համոզեսցէ զմիտս ամե-
 նեցուն ՚ի ճշմարիտն , ՚ի բարին և ՚ի
 կատարեալն :

Իսկ մեք աղօթս առնեմք վասն
 ձեր հանապազ , զի զյետոյսն մոռա-
 ցեալ ՚ի յառաջագէմն նկրտեսջիք , և
 լստ Առաքելոյն դեղեցիկ պատուի-
 րանի , « Ար ինչ ճշմարտութեամբ է ,
 որ ինչ արդարութեամբ , որ ինչ սրբ-
 բութեամբ , որ ինչ սիրով , որ ինչ
 համբաւ բարեաց , որ ինչ քաջու-
 թեամբ , որ ինչ գովութեամբ , զայն

խորհիջիք : Օ ի եղիջիք ճշմարտ
որդիք Աստուծոյ և որդիք Աղբին, և
երեւետիք իբրեւ լուսաւորք յաշխար-
հի ՚ի մէջ ազգացն, շուրջ զձեօք բը
նակեցոյ : Աղօթս առնեմք հանապազ
զի լուսիք զինդու թիւն մեր, լինելով
համաշունչք և միախորհուրդք ՚ի կա-
միս Աստուծոյ և յիբաւունս արդարու-
թեան : Այլ մանաւանդ՝ մի ինչ ըստ
գրգռութեան, և մի ինչ ըստ սնա-
պարծութեան, այլ խոնարհութեամբ
զմիմեանս ըսւ համարել քան զանձի-
նրս և միով հագւով և միով շնչով
նահատակիլ ՚ի հաւատս Աւետարա-
նին, ՚ի շինութիւն Այկեղեցւոյ եւ
Աղբին, ՚ի յառաջագիմութիւն ներ-
կայի և ազագային, ՚ի պարծանս ա-
ռաջնոցն և յօրինակ յետագայից, ՚ի
մի ի թարութիւն մարդկան և ՚ի փա-
ռքս և ՚ի գովեստ Աստուծոյ, որոյ
խաղաղութիւնն ցանկալի, որ ՚ի վեր
է քան զամենայն բանս և զխորհուր-
դքս, պահեսցէ զսիրտս ձեր և զմի-
տքս ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր
մեր . ամէն :

Տոբալ յաթի Տեառն 1872 և ՚ի 11
Փետրւար ամսոյ, յԱռաքելական Արհաման
Ս. Յովիթեանց, յԱրդասաղէմ :



ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Ռ. Ո Ղ, Զ Ո Ւ Թ Ե Ա Ն

(Հարուճակութիւն, տեղ թիւ 1)

ԳԼՈՒԽ Բ.

Բորբոք ստամբոսաց և փորոպէաց :

Ա՛մենայն բորբոք ստամբոսաց
կամ աղեաց է յոյժ վտանգաւոր, որ
և պահանջի փութով ինամ տանիլ ա-
ռողջութեան, քանզի բազում անգամ
վերջանան խղիւսայթմամբ կամ տպա-
կանութեամբ ՚ի չարաչար մահ :

Պատճառք :

Բորբոք ստամբոսաց յառաջ գայ
յայնպիսի իրաց, յորոց պատճառի տա-
պողական ջերմ՝ ՚ի ներքուստ, այս-
ինքն ՚ի ցուրտ և ՚ի զովարար բնակե-
լեաց, յորժամ դեռ մարմինն ՚ի սառ-
տիկ կրթութենէ կամ ՚ի ծանր վաս-
տակոց երկար ձեմելոյ, վաղելոյ, պա-
րելոյ, և այլն, է կարի ջերմ և քրտ-
նեալ, որով իսկոյն փակի ծակտի մառ-
մնայն և խափանի արտաշնչութիւնն իս-
պառ : Ասե հնարէ այնց պատճառիլ
՚ի կծուութենէ մաղձի, կամ ՚ի կծու
և ՚ի գրգռիչ ուտելեաց, ՚ի փոխողա-
կան, ՚ի լուծիչ և ՚ի թիւնաւոր դեղոց՝
հնարելոյ ՚ի սուտանուն բժշկաց, ՚ի
յետադարձմանէ յօդացաւութեան,
՚ի սաստիկ ցրտութենէ, յանկարգ կե-
ցութենէ և ՚ի կարծր կամ յանմար-
սելի իրաց մնացեալ ՚ի ստամբոսի, որ-
պիսի են՝ ոսկր կամ կուտ պողոյ, և
այլն :